ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____» _____ 2020թ.

«ՍՊԻՏԱԿԻ ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ԽՈՒՄԲ» ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ
ՀԿ-Ի ՆԱԽԱԳԱՀ ԱՇԽԵՆ ԲԱԲԱՅԱՆԻՆ

Ձեր՝ 29.09.2020թ. 24-09-20/231-Գ գրությանը.

Հարգելի տիկին Բաբայան

Նոր տիպի կորոնավիրուսային հիվանդության համավարակի տարածման կանխարգելման նպատակով հայտարարված արտակարգ դրությամբ պայմանավորված հանրակրթական դպրոցները անցել են հեռավար կրթության: Այդ ժամանակահատվածում ճշգրտվել են աշակերտների կրթության կարիքները և բազմազավակ սոցիալապես անահապով ընտանիքի երեխաներին հատկացվել է թվով 176 պլանշետ և 50 սմարթֆոն՝ հեռավար կրթությանը այդ աշակերտների մասնակցությունը ապահովելու համար: Սույն թվականի օգոստոսի 1-20 ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից կազմակերպել և անց է կացվել ամառային դասընթացներ, հեռավար եղանակով ուսումնական գործընթացից ինչ-ինչ պատճառներով դուրս մնացած սովորողների համար՝ բաց թողնված նյութը լրացնելու նպատակով:

IDBank-ի և idram կազմակերպության համագործակցության արդյունքում «Մի դրամի ուժը» ծրագրի շրջանակներում ՀՀ Լոռու մարզի թվով հեռավար կրթությամբ սովորող լեռնային բնակավայրերի աշակերտներին տրամադրվել է 37 դյուրակիր համակարգիչ:

Ձեռք է բերվել պայմանավորվածություն Չեխիայի Հանրապետության դեսպանատան հետ ս/թ հոկտեմբեր ամսվա ընթացքում Սպիտակ քաղաքի շուրջ 135 աշակերտներին պլանշետներ տրամադրելու համար:

Աշակերտերի հեռավար ուսուցման մասնակցությունը եղել է դպրոցների ղեկավարության, մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության

կատ. Ռ. Հարությունյան
հեռ. /0322/ 2-32-99

ուշադրության կենտրոնում, և աշակերտների ներգրավվածության բարձր ցուցանիշներն ապահովվել է մարզպետարան-դպրոց սերտ համագործակցության արդյունքում:

Հարգանքով՝

10/5/2020

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ

կատ. Ռ. Հարությունյան
հեռ. /0322/ 2-32-99